1.7. Անուղղակի պայմաններով խնդիրներ

Երեխայի հետ զբաղվողին

1. Արմինեն 9 տարեկան է: Նա իր մայրիկից 21 տարով փոքր է: Մայրիկը քանի՞ տարեկան է:

Արմինեն քանի՞ տարեկան է: Իսկ մայրի՞կը: Մայրիկի տարիքը չգիտենք, բայց գիտենք, որ Արմինեն իր մայրիկից 21 տարով փոքր է: Այսինքն Արմինեի մայրիկը նրանից 21 տարով մեծ է: Արմինեն 9 տարեկան է, իսկ մայրիկը՝ 9-ից 21-ով ավելի տարեկան: Այսինքն՝ մայրիկը **30 տարեկան** է (9 + 21 = 30): 9-ին 21 կարող ենք նաև այսպես ավելացնել՝ 9 +1, 10 կստացվի, իսկ մնացած 20-ը ավելացնելուց հետո՝ 30 (9 + 1+ 20 = 30):

2. Օդանավակայանում 56 ինքնաթիռ կա, ուղղաթիռներից 18-ով ավելի: Օդանավակայանում քանի՞ ուղղաթիռ կա:

Մի մեծ օդանավակայանում 56 ինքնաթիռ կա ու մի քանի ուղղաթիռ: Խնդրում ասված է. «... 56 ինքնաթիռը ուղղաթիռներից 18-ով ավելի է»: Ինքնաթիռները 18-ով ավելի են, ուրեմն ուղղաթիռներն ինքնաթիռներից 18-ով պակաս են: 56 ինքնաթիռ է, դրանից 18-ով պակաս՝ ուղղաթիռ: 56-ից 18 պակաս, այսինքն՝ 56-18, կլինի **38**:

Եթե հանումը չհասկացվի, այսպես հաշվեք.

ա) 56-ից 18 հանելը նույնն է, թե 10 և 8 հանես: Արի հերթով հանենք: 56-ից 10 հանած, կլինի 46: 46-ից 8-ը կարող ենք միանգամից հանել, ստանալ 38: Կարող ենք նախ 8-ի 6-ը հանել (8 = 6 + 2), հետո՝ մնացած 40-ից 2-ը հանել: Կամ կարող ենք 46-ի 30-ը պահել, իսկ մնացած 16-ից 8-ը հանել: Կստացվի 30 և ութ՝ 38:

բ) 18 հանելու համար 20-ը բավական է: 56-ի 20–ից կարող ենք 18-ը հանել, իսկ մնացած 36-ը պահել: 20-ից 18 հանելիս 2 կստանանք: Կստացվի 36 և 2՝ 38:

Հուշում

Ամենակարևորը նման փեղերում միշտ հստակեցնելն է՝ ով կամ ի՞նչն է փոքր, ով կամ ի՞նչն է մեծ:

Արի խնդիր լուծենք

1. Այգում 16 բալենի կա: Դրանք տանձենիներից 4-ով քիչ են: Այգում քանի՞ տանձենի կա:

Հուշում

Կարող ես նկարելով, մանր առարկաներ օգտագործելով քեզ օգնել:

Պատասխանը՝ 30 մատչելի:

Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Նունեն 10 տարեկան է: Նա Սուրենից 5 տարով մեծ է: Սուրենը քանի՞ տարեկան է:

2. Կարոն 12 վանդակավոր տետրեր ունի: Դրանք տողած տետրերից 8-ով ավելի են: Կարոն քանի՞ տողած տետր ունի:

3. Երեխաներին 18 մատիտ նվիրեցին: Դրանք 8-ով ավելի էին, քան տիկնիկները: Քանի՞ տիկնիկ նվիրեցին:

4. Դաշտում 14 կով է արածում: Դրանք ոչխարներից 12-ով քիչ են: Դաշտում քանի՞ ոչխար է արածում:

5. Այգում մոռի 12 թուփ կա, որը հաղարջի թփերից 3-ով ավելի է: Այգում հաղարջի քանի՞ թուփ կա:



6. Առաջին տուփում 21 փուչիկ կա, որը 7-ով շատ է երկրորդում եղածից: Երկրորդ տուփում քանի՞ փուչիկ կա:

7. Տոնին 30 կարմիր փուչիկներ կային: Կարմիրները դեղիններից 7-ով քիչ էին: Տոնին քանի՞ դեղին փուչիկ կար:

8. Մեր այգում 15 վարդի թուփ կա, եղրևանու թփերից 4-ով ավելի: Մեր այգում եղրևանու քանի՞ թուփ կա:

9. Սերոբը 11 սպիտակ աղավնիներ ունի, մոխրագույն աղավնիներից 7-ով քիչ: Սերոբը քանի՞ մոխրագույն աղավնի ունի:

10. Այգում 19 տանձենի էր ծաղկել, ծաղկած խնձորենիներից 8-ով շատ: Այգում քանի՞ խնձորենի էր ծաղկել:

11. Արմենը 12 զինվոր ունի: Դա Արսենի ունեցածից 6-ով շատ է: Արսենը քանի՞ զինվոր ունի:

12. Սարգիսը 53 կրծքանշան ունի: Դա Արսենի ունեցածից 18-ով ավելի է: Արսենը քանի՞ կրծքանշան ունի:

13. Ես 80 դրոշմանիշ ունեմ, եղբորս ունեցածից 14-ով քիչ: Եղբայրս քանի՞ դրոշմանիշ ունի:

1.8. Գումարի որոշումը (մի քանի քայլով)

Երեխայի հետ զբաղվողին

1. Մի թփին 5 վարդ էր բացվել, մյուսին՝ 4-ով ավելի: Երկու թփին քանի՞ վարդ էր բացվել:

Երկու թփերին վարդեր են բացվել: Մի թփին 5 վարդ կա, իսկ մյուսին՝ 4-ով ավելի: Այսինքն՝ երկրորդ թփի վրա առաջին թփի վրա եղածի չափ՝ 5 վարդ կա ու էլի 4 վարդ, այսինքն՝ **9 վարդ** (5 + 4 = 9):

2. Ավտոբուսում 12 ուղևոր կար: Կանգառում 5-ը իջան, 6-ը բարձրացան: Ավտոբուսում քանի՞ ուղևոր եղավ:

Ավտոբուսում 12 ուղևոր կար: Կանգառում 5-ը իջան: Մարդիկ արդեն 12-ը չէին, այլ 5-ով պակաս: Այսինքն՝ 7-ը (12 - 5 = 7): Ներսում 7 մարդ կար, 6-ն էլ բարձրացան: Այսինքն 7 մարդուն 6 մարդ ավելացավ՝ գումարվեցին: 7 + 6 = 13:

Ավտոբուսի ուղևորները **13 դարձան**:

Հուշում

Որպեսզի երեխան հար-հար հաշվելուց կամաց-կամաց գործողությունն անմիջապես կարարելուն անցնի, խնդիրը լուծելուց հետո, վերջում միշտ նշեվ արված գործողությունը: Օրինակ՝ վերջում՝ 12-ից հանած 5 7 է: Հետո 7-ին 6 գումարած 13 կլինի:

3. Անահիտը 18 էջանշան պատրաստեց, Արմինեն՝ 5-ով ավելի, իսկ Անին՝ Անահիտից 6-ով քիչ: Աղջիկները քանի՞ էջանշան պատրաստեցին:

Մասնակիցները շատ են, ուրեմն արի հանգիստ հասկանանք՝ ո՛վ ինչքա՛ն պատրաստեց: Օրինակ այսպես՝

Անահիտը 18 էջանշան,

Անին դրանից 6-ով քիչ, այսինքն՝ 18-ից 6-ով պակաս: 18 - 6 = 12: Անին **12 էջանշան**:

Արմինեն Անահիտից 5-ով ավելի է պատրաստել: Այսինքն՝ 18-ից 5-ով ավելի: 18 + 6 = 24: Արմինեն **24 էջանշան**:

Աղջիկները պատրաստել են 18, 12 և 24 էջանշան: Այսինքն միասին, իրար հետ կլինի 18 + 12 + 24 = 54: Գիտե՞ս ինչպես հաշվեցի: Ասեմ: Գուցե դու էլ այդպես հաշվես: 18-ի և 12-ի մեջ միասին 2 հատ 10 կա, 24-ի մեջ էլ 2 հատ: Ընդամենը եղավ 4 հատ 10, այսինքն՝ 40: Մնաց 8-ին 2 և 24-ից մնացած 4-ը գումարել: 8 + 2 + 4 = 14, 40 էլ ունեինք, դարձավ **54** (40+14= 54):

Արի խնդիր լուծենք

1.

Նկարին նայելով հաշվիր՝ երկուսը միասին քանի՛ փուչիկ ունեն:

Պատասխանը՝ 51 փուչիկ:

Զգաս նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Խանութ 10 արկղ կոնֆետ և 3 արկղով ավելի թխվածք բերեցին: Ընդամենը քանի՞ արկղ քաղցրավենիք բերեցին:

2. Տատիկս 2 աքաղաղ և 4 սագ ունի, իսկ նրա հավերն այնքան են, ինչքան աքաղաղներն ու սագերը միասին: Տատիկը քանի՞ հավ, աքաղաղ և սագ ունի:

3. Հայկն առաջին օրը 12 կգ կարտոֆիլ գնեց, երկրորդ օրը՝ 6 կգ-ով ավելի: Երկու օրում ինչքա՞ն կարտոֆիլ գնեց:

4. Մեր դասարանում 16 սեղան կա, իսկ կողքի դասարանում՝ 4-ով ավելի: Երկու դասարանում միասին քանի՞ սեղան կա:

5. Զամբյուղի մեջ 21 կգ միրգ կա, իսկ արկղի մեջ՝ 5 կգ-ով ավելի: Արկղում և զամբյուղում միասին քանի՞ կիլոգրամ միրգ կա:

6. Մի շենքում 40 բնակարան կա, մյուսում՝ 20-ով ավելի: Երկու շենքում միասին քանի՞ բնակարան կա:

7. Դաշտում 26 կով և 9-ով ավելի ոչխար էր արածում: Դաշտում քանի՞ գլուխ անասուն էր արածում:

8. Ծառի վրա 24 տանձ կա, իսկ ծառի տակ՝ 15-ով քիչ: Ընդամենը քանի՞ տանձ կա:

9. Նավակի մեջ 10 մարդ կարող է նստել, իսկ նավի մեջ՝ 60-ով ավելի: Նավի ու նավակի մեջ ընդամենը քանի՞ մարդ կարող է նստել:

10. Ձկնորսներն առաջին օրը 35 կգ ձուկ որսացին, երկրորդ օրը՝ 12 կգ-ով ավելի: Երկու օրում քանի՞ կիլոգրամ ձուկ որսացին:

11. Տղաներն առաջին օրը 10 կմ անցան, երկրորդ օրը՝ 25 կմ-ով ավելի, իսկ երրորդ օրն այնքան, որքան առաջին երկու օրում: Երրորդ օրը քանի՞ կիլոմետր անցան:

12. Դպրոցի ճաշարանը 70 բրնձով կարկանդակ ստացավ ու 10-ով քիչ՝ մսով կարկանդակ: Ճաշարանն ընդամենը քանի՞ կարկանդակ ստացավ:

13. Գրադարանում երեխաներն առաջին օրը 40 գիրք նորոգեցին, երկրորդ օրը՝ 18-ով պակաս, իսկ երրորդ օրը՝ առաջին օրից 9 գրքով ավելի: Երեխաներն ընդամենը քանի՞ գիրք նորոգեցին:

14. Արտակն առաջին օրը մեքենայով 42 կմ անցավ, երկրորդ օրը՝ 18 կմ-ով պակաս, իսկ երրորդ օրը՝ երկրորդ օրից 6 կմ-ով ավելի: Երեք օրում Արտակը քանի՞ կիլոմետր անցավ:

15. Առաջին օրը խանութը 25 կգ շաքար ստացավ, երկրորդ օրը՝ 5 կգ-ով ավելի, իսկ երրորդ օրը՝ 15 կգ-ով ավելի, քան երկրորդ օրը: Ընդամենը քանի՞ կիլոգրամ շաքար ստացավ:

16. Մի տուփում 6 մատիտ կա, երկրորդում՝ 12 մատիտ, իսկ երրորդում՝ այնքան, ինչքան մատիտ կա առաջին ու երկրորդ տուփերում միասին: Երեք տուփում քանի՞ մատիտ կա:

17. Մանկապարտեզի համար 12 տիկնիկ ու 7 մեքենա առան, իսկ գնդակ՝ այնքան, որքան տիկնիկներն ու մեքենաները միասին: Քանի՞ խաղալիք առան:

18. Մի տակառում 10 լ ջուր կա, երկրորդում՝ 25 լ, իսկ երրորդում՝ այնքան, ինչքան ջուր կա առաջինում և երկրորդում միասին: Երեք տակառում ինչքա՞ն ջուր կա:

19. Դպրոցի ճաշարանում 32 դանակ ու 74 պատառաքաղ կա, իսկ գդալ՝ այնքան, ինչքան դանակներն ու պատառաքաղները միասին: Ճաշարանում ընդամենը քանի՞ դանակ, պատառաքաղ ու գդալ կա:

20. Մոխրոտը հողամասից 360 կգ վարունգ հավաքեց, որը 80 կգ-ով դդումից քիչ է և 70 կգ-ով ավելի է, քան դդմիկը: Մոխրոտն ինչքա՞ն բանջարեղեն հավաքեց: